բարձացընել. séduire; 2. exciter des troubles.

Թէֆթիմ, ա. բ. իմացացընել. faire comprendre.

Թէֆթիշ, ա. բ. քննել. քննութիւն. 2. առնել հարցափորձ. հարցափորձ. 3. քննիչ. rechercher; recherche; examiner, faire l'examen de qc.; examen; faire (la) une revue de..; passer qc. en revue; revue; 2. faire une enquête, faire une (des) information(s); enquête, information; 3. examinateur.

Թէֆթիր, ա. բ. մեղմացացընել. adoucir, commuer.

Թէֆթիր, ա. բ. տալ լուծանել պահս. faire rompre le jeûne à qn.

Թէֆթիք, տ. տես Թիֆթիք:

Թէֆ'իլէ(թ), ա. եղ. թէֆա'իլ, յգ. ոտն չափական բանից. pied métrique.

Թէֆիրէ(թ), ա. խորաւուկ է վերայ վերնոյ շրթան. fossette au milieu de la lèvre supérieure.

Թէֆիֆ, ա. բ. գոչել ուֆ. s'écrier ouf de douleur, de dégoût, d'horreur.

Թէֆխիմ, ա. բ. պատուել. մեծարացընել. մեծարանօք մեծարել. honorer, respecter, élever, exalter par des louanges.

Թէֆհիսէ(թ), ա. բ. ակնարկ առնել. ցուցընել. faire allusion à qc., indiquer qc.

Թէֆհիմ, ա. բ. իմացացընել. հասկացընել. faire comprendre, donner à entendre.

Թէֆճի', ա. բ. տառապեցացընել. տրտմեցացընել. causer de la douleur, du chagrin, affliger, attrister.

Թէֆճիր, ա. բ. հոսել. ծորեցացընել. 2. անառակ կոչել զոք. donner une issue à l'eau, faire couler; 2. nommer qn. libertin.

Թէֆս, ա. քերծել գլուխ և մարմնոյ հերքը. հատանել եղունգները... se raser la tête et le poil du corps, se couper les ongles...

Թէֆսիհ, ա. բ. ընդարձակել. լայնել. élargir.

Թէֆսիտէ, գ. ջեռուցեալ. (ré-)chauffé.

Թէֆսիտէ-լէպ, գ. ծարաւի. altéré.

Թէֆսիր, ա. բ. մեկնել. մեկնութիւն (կանոնի). expliquer, commenter; commentaire.

'**Ա՛թֆը թէֆսիր.** մեկնէ յառաջեալն. բացայայտէ. mot qui explique le précédent.

Թէֆսիրէ(թ), ա. բ. քննել զմէզ հիւանդին. մէզ հիւանդին. examiner l'urine d'un malade, urine d'un malade que le médecin examine.

Թէֆվիզ, ա. բ. յանձն առնել առաջ դնել գործն. 2. առնուլ զկին առանց տալոյ նմա զօժիտն. charger qn. de qc., recommander qc. à qn., confier une affaire à qn.; 2. épouser une femme sans lui donner la dot d'usage.

Թէֆվիթ, ա. բ. կորուսանել. perdre.

Թէֆտիէթ, ա. բ. տալ զանձն ի վերայ առաքել. exposer sa vie pour qn., se sacrifier, s'immoler, se dévouer pour qn.

Թէֆրի', ա. բ. (հետեւցընել.) զհետ բերել. ընծայեցացընել. tirer une conséquence (ou inférer) de qc., conclure, déduire de qc.

Թէֆրիգ, } ա. բ. անջատել. անջատում. ցրում. 2. անջատել. քակել. ցրուել. se séparer, séparation, dispersion; 2. séparer, diviser, disperser.
Թէֆրիգա(թ), }

Թէֆրիգա-պախշ, գ. քակիչ. séparateur, qui divise, disperse.

Թէֆրիէթ, ա. բ. մորթազարդել մաշկամորթ. fourrer, garnir, doubler de fourrure.

Թէֆրիզ, ա. բ. քակել ի միմեանց. séparer une chose d'avec une autre.

Թէֆրիզ, ա. բ. պարտք դնել ի վերայ. prescrire qc. à qn. comme une obligation, imposer une obligation.

Թէֆրիթ, ա. բ. չափազանցութեան. անչափ առնել. անհամեմատութիւն. անչափաւորութիւն. 2. մա-